# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/2 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգով կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների (Երևանի թիվ 8 արհեստագործական պետական ուսումնարան) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.01.2023թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

**Գնահատող հանձնաճողովի կազմը.**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Մասիս Աղայանց /գնահատող/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Հովսեփ Գրիգորյան /գնահատող/ |
| | Հարություն Մարտիրոսյան /գնահատող/ |
| | Արմեն Քոչարյան /բացող/ |
| | Արտյոմ Պետրոսյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Արսեն Սողոմոնյան |

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 «ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/2» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգով կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացի հրավերի վերաբերյալ 2022 թ. դեկտեմբերի 10-ին, ժամը 15:13-ին հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ստացվել է հետևյալ հարցումը/հիմնավորումները.

«ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգի կցված ծավալաթերթ նախահաշվում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես խնդրում ենք պարզաբանել ծավալաթերթ նախահաշվում առանձին բաժինների համար սահմանված կշիռները, որոնց գումարային կշիռը 100 տոկոս է, սակայն սարքավորումների համար առանձին կշիռ է սահմանված և առանձին բաժին նախատեսված չէ: Խնդրում ենք Ձեզ սարքավորումների համար առանձին բաժին նախատեսել և Բաժինների համար սահմանված կշիռները հստակեցնել: »:

1.2 Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման զեկուցագրով ներկայացված դիրքորոշումը, գնահատող հանձնաժողովի որոշմամբ ստացված հարցման/հիմնավորումների վերաբերյալ 13.12.2022թ տրվել է հետևյալ պատասխանը.

«Ձեր հարցմանն/հիմնավորումներին ի պատասխան պարզաբանում ենք, որ. Ծավալաթերթ-նախահաշվում սարքավորումների համար առանձին բաժին նախատեսված չէ, քանի որ այն վերաբերում է բոլոր բաժիններում նախատեսված աշխատանքներում ներառված սարքավորումների տեղադրման համար պահանջվող գումարին՝ բոլոր բաժինների հանրագումարի տոկոսային հարաբերակցությամբ, որի համար չի հաշվարկվում ոչ շահույթ, ոչ վերադիր ծախսեր: Միաժամանակ դիտարկելով Ձեր հարցումը/հիմնավորումները ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով, ինչպես նաև ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 3.5 կետով սահմանված պահանջների շրջանակներում՝ տեղեկացնում ենք, որ Ձեր ներկայացրած հիմնավորումները գնահատող հանձնաժողովի համար ընդունելի չեն և դրանցով պայմանավորված հրավերում փոփոխություններ չեն կատարվելու:»:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | «Բիդեք» ՍՊԸ | bedeck.llc@mail.ru |

**3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

**4. Մասնակցի առաջարկած գինը.**

4.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

| Հ/Հ | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | |
|---|---|---|---|
| | | «Բիդեք» ՍՊԸ | |
| | | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | |
| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 1 | 441030290 | 359983725 | 431980470 |

**5. Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.**

5.1 Մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, 2023թ հունվարի 12-ին, ժամը 15:00-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 12.01.2023թ. ժամը 15:00-ին**

**6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

6.1 **«Բիդեք» ՍՊԸ-ի** հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

6.2 **«Բիդեք» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Ծավալաթերթ-նախահաշվի «Սարքավորումներ» տողում լրացված կշիռը/տոկոսը չի համապատասխանում նույն տողի և «Ընդամենը բոլոր բաժիններով» տողի «Ընդամենը» սյունակում լրացված գումարների հարաբերակցության իրական կշռին/տոկոսին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

**7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.**

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«Բիդեք» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.2 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել 2023թ. հունվարի 16-ին, ժամը 15:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:*

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 16.01.2023թ. ժամը 15:00-ին**

**8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**

8.1 **«Բիդեք» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում շտկել է հանձնաժողովի կողմից 6.2-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

9. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

**1-ին տեղ** զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Բիդեք»** ՍՊԸ-ին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**10. Գնահատման արդյունքների մասին.**

10.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողով՝

______________ Մասիս Աղայանց /նախագահ/

______________ Հովսեփ Գրիգորյան

______________ Հարություն Մարտիրոսյան

______________ Արմեն Քոչարյան

______________ Արտյոմ Պետրոսյան

______________ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/